ՀՀ Արագածոտնի մարզի ՍադունցիՍ.Մուրադովի անվան
հիմնական դպրոցի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028թթ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....2

Հաստատության առաքելությունը.....3

Հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ.....4

Հաստատության գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտները 5

Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան.....6

Դպրոցի ֆինանսական գործունեությունը.....19

Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը,դրանց վարումը 24

Աշակերտական համակազմը.....25

Մանկավարժական համակազմը.....29

Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.....32

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները.....34

Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների..36

Ուսումնական միջավայրը.....38

Տեխնոլոգիաներն ու նորարությունները.....40

Հաստատության գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակներն ու խնդիրները.....41

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները,կատարողները, ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական ծախսերը.....
47

Ծրագրի կատարման չափանիշները,վերահսկողությունը.....54

ՆԱԽԱԲԱՆ

Սադունցի Ս.Մուրադովի անվան հիմնական դպրոցի զարգացման ծրագիրը ուսումնական հաստատության ռազմավարական փաստաթուղթն է,որի հիման վրա պլանավորված է հինգ տարվա տեսլականը՝2023-2028թթ:
Ծրագիրը մշակված է՝համաձայն ԿԳՄՍ նախարարի 2022թվականի սեպտեմբերի22-ի N35-Ն հրամանով հաստատված ձևաչափի:
Հիմնված է առանձին ոլորտներում իրականացված վերլուծությունների,ուժեղ ու թույլ կողմերի առանձնացմանև, ըստ այդմ, սահմանված նպատակների ու հիմնախնդիրների վրա:
Առաքելությունը և նպատակները սահմանելիս՝ ուղենիշ են համարվել հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները,ինչպիսիք են՝ մարդկային արժանապատվության պահպանումը, հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների,մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը,քաղաքացիական գիտակցության կարևորումը,անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը,ապագա քաղաքացու ձևավորումը:
Արագ փոփոխությունների գնացող և դինամիկ այս ժամանակաշրջանում ապրելով հնարավոր է համարվում որոշ նպատակների և գործողությունների
ձևափոխությունը՝ժամանակի պահանջներին հարմարվելու և ճկուն լինելու համար, սակայն ուղենիշային այդ սկզբունքները համարում ենք բացառապես մնայուն ու արդի արժեքներ:

Զարգացման ծրագրի գեր խնդիրն է համարվում ուսումնական միջավայրի բարելավումը,կրթության որակի բարձրացումը և ուսումնառության
մատչելիությունը՝ հարմարեցված տարբեր ընդունակությունների տեր սովորողների համար՝այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Գերխնդիր է համարվում նաև հավասար հնարավորությունների ընձեռումը բոլոր սովորողների համար,նրանցից յուրաքանչյուրի լիարժեք ներառումը կրթական միջավայրում,խտրականության բացառումը:

1. Հաստատության առաքելությունը.

ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ Է

Յուրաքանչյուր ոք արժանի է,որպեսզի ստանա հնարավորություն և ունենա կրթության իրավունք:
Մարդու բնութագիրը ձևավորում է.

- Փոխադարձ հարգանքը
- Հանդուրժողականությունը
- Պատասխանատվությունը
- Օգնելու պատրաստակամությունը

ՁԳՏԵԼ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ և ՁԵՎԱՎՈՐԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Մենք գնահատում ենք երջանիկ կյանքով ապրելու հնարավորությունը և սրա նախապայմանը համարում ենք հաջողությունը: Մենք համոզված ենք ,որ յուրաքանչյուրն ունի այս հնարավորությունը:Մեր նպատակն է օգնել նրան՝հասնելու ակադեմիական և անձնական հաջողության:

Մենք մղում ենք սովորողներին ձևավորելու սեփական կյանքը հետևյալ սկզբունքներով.

- Աշխատել կարգապահ և պատասխանատու
- Ունենալ տոկունություն և հաղթահարել դժվարությունները
- Կառուցողական մոտեցում ցուցաբերել սեփական ուժեղ ու թույլ կողմերի նկատմամբ
- Զարգացնել մասնագիտական ուղու հեռանկարը

Մեր աշխատանքն ուղղված է ձևավորելու սովորողների մոտ.

- Մասնագիտական կողմնորոշում
- Սովորելու կարողություն
- Ինքնուրույնություն
- Համագործակցելու և հաղորդակցվելու կարողություն

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ժամանակակից կյանքի հիմնախնդիրներից մեկը էկոլոգիական հիմնախնդիրն է:Այդ առումով մենք ունենք սկզբունք՝սովորել և գործել հանուն մեր ապագայի:

Մենք մղում ենք,որ սովորողները ձգտեն ունենալ.

- Մաքուր և պլաստիկից զերծ բնություն ու շրջակայք
- Կանաչապատ ու բարեկարգ համայնք

2. Հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ.

ՀՀ Արագածոտնի մարզի Սադունցի Ս. Մուրադովի անվան հիմնական դպրոց

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝50.210.00089

Մարզը՝ Արագածոտն

Հասցեն՝գ. Սադունց, 2-րդ փողոց, շենք 9

Դպրոցի ստեղծման տարեթիվը՝1989թ

Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի՝հիմնական , 1-9-րդ դասարաններ

Դպրոցի աշխատանքային շաբաթը՝5-օրյա

Դպրոցի աշխատանքային ժամակարգը /ռեժիմը/՝միահերթ

Ենթակայությունը՝մարզային

Աշակերտական համակազմը՝ 30

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թ. Մարտի 24-ի դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝ տարրական ընդհանուր 1-ին աստիճանի կրթություն իրականացնելու 40 սովորողների համար:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թ. Մարտի 24-ի դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝ հիմնական ընդհանուր կրթություն իրականացնելու 60 սովորողների համար;

Աշխատակիցներ՝ 18

Մանկավարժական անձնակազմ՝12

Գտնվելու վայրը

Փոստային դասիչը՝0403

Մարզը՝Արագածոտն

Տարածաշրջան՝ Ալագյազ

Համայնքը/ Վարչական շրջան՝ Սադունց

Կապի միջոցներ

Հեռախոս՝-----

Բջջային՝

+37477550411

Էլեկտրոնային փոստamretaza@schools.am

3. Հաստատության գործունեության վերլուծությանն նպատակադրման ոլորտները.

- Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան
- Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը
- Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը,դրանց վարումը (դպրոցի կանոնադրություն,տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր)
- Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները
- Աշակերտական համակազմը
- Մանկավարժական համակազմը
- Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ
- Ուսումնական միջավայրը
- Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների
- Տեխնոլոգիաները և նորարարությունները

4. Հաստատության գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները.

Հաստատության շենքային պայմաններնու նյութատեխնիկական բազան

Իրավիճակի վերլուծություն

Հաստատության շենքը կայուն է արտաքին վտանգների ազդեցությանը՝ ուժեղ քամիներ,սողանքներ,երկրաշարժեր,հրդեհներ, և այլն:Սրա հետ մեկ տեղ՝ շենքը հիմնանորգված է:

Դպրոցը կառուցվել է 1989թվականին:

Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:Հաստատությունն ապահովված չէ կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:Շենքային պայմանները հարմարեցված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողների պահանջներին, չունեն թեքահարթակներ:

Հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով,վահանակով և կրակմարիչներով:

Հաստատության կահույքը մասամբ համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, որոշ մասը ամուր և բարվոք վիճակում է, որոշ մասը՝ ոչ այնքան:

Տարհանման պլան-սխեման փակցված է միջանցքում:Տարհանման ուղիները բարեկարգ են:

Դասասենյակների թիվը 7-ն 2-ը միացյալ է: Առկա է 1 <<Համակարգչային>>

սենյակ, որն ապահովված է համացանցի կապով, համակարգիչներով, համապատասխան տեխնիկայով՝ տպիչով, տեսարձակման սարքով:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն

Իրավիճակի վերլուծություն

Դպրոցը ֆինանսավորվում է պետական բյուջեից:Կախված աշակերտների (դասարաններ) թվից՝ ֆինանսավորման ծավալը փոքր է: Նախորդ տարիներին դպրոցի եկամուտների և ծախսերի հարաբերակցությունն ունեցել է հետևյալ տեսքը.

Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը,դրանց վարումը (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր,ներքին իրավական ակտեր)

Իրավիճակի վերլուծություն

Հաստատությունն ունի իր գործունեության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ցանկը և ցանկում նշված բոլոր
փաստաթղթերը: Այդ փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա կազմվում և սահմանված կարգով հաստատված են լինում իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը:
ՀՀ ԿԳՄՄՆ -ի կողմից հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության
ենթակա փաստաթղթերի անվանացանկը, որը փուլային կարգով անցում է կատարում վարման էլեկտրոնային եղանակի:
Ուսումնական հաստատությունում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը և պատշաճորեն վարվում են կարգին
համապատասխան,իսկ այն փաստաթղթերը, որոնք արդեն իսկ գործումեն էլեկտրոնային եղանակով ՝ օր. էլեկտրոնային

մատյան,աշխատանքային պլաններ,վարվում են էլեկտրոնային եղանակով:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ
Առկա են և կարգի համաձայն վարվում են հաստատության գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերը:	

Աշակերտական համակազմը

Իրավիճակի վերլուծություն

Ուսումնական հաստատություն սովորողը ընդունվում է ծնողի (կամ նրա օրինական ներկայացուցչի) կողմից ներկայացված դիմումի և ուսումնական հաստատության ու ծնողի (կամ նրա օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է հաստատության նախագծային հզորությանը և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:Հաստատությունում սովորում են **30** աշակերտ:

Մանկավարժական համակազմը

Իրավիճակի վերլուծություն

Աշխատակիցների ընդհանուր թիվը՝18
Վարչական աշխատողներ՝1
Մանկավարժական աշխատողներ՝11
ՈՒսումնաօժանդակ անձնակազմ՝6
Անձնակազմը միշտ բաց է նորարարությունների առաջ,աշխատասեր է և պատրաստ փոխօգնության:

Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Իրավիճակի վերլուծություն

ՈՒսումնական հաստատության լիարժեք գործունեության համար անհրաժեշտ է վերջինիս համագործակցումը համայնքի,կրթության կառավարման մարմինների,առանձին կազմակերպությունների հետ:

Համայնքապետարանի կրթության բաժնի կողմից կազմակերպվում են մշակութային միջոցառումներ , մրցույթներ, որոնց սիրով և մեծ ակտիվությամբ մասնակցում են և՛ աշակերտները , և՛ ուսուցիչները: Համագործակցությունը զարգացած է նաև համայնքի

մյուս ուսումնական հաստատության հետ:

Հաստատությունը մշտապես պահպանում է կապը ծնողական համայնքի հետ հիմնականում ծնողական ժողովների և տարբեր մասնավոր հանդիպումների ձևով:

Հաստատությունը համագործակցում է նաև ԿԳՄՍ նախարարության Արագածոտն մարզի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ, ԿՁՆԱԿ-ին նրա թիմի անդամների հետ , արձագանքում բոլոր հետաքրքիր նախաձեռնություններին և կազմակերպվող հանդիպումներին, միջոցառումներին: Մանսնակցում են <<Ընթերցանությունը տարրական դպրոցում>> դասընթացներին:

ՈՒսումնական հաստատության համագործակցությունը կրթության կառավարման մարմինների հետ կայանում է մշտապես:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ
Համագործակցում է համայքապետարանի կրթության բաժնի հետ	Ծնողներն առավել ընդգրկուն ներգրավված չեն ուսումնական գործընթացում:
Համագործակցում է ծնողների հետ	
Առկա է մշտական համագործակցություն կրթության կառավարման մարմինների հետ:	

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Իրավիճակի վերլուծություն

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորված են կառավարման և խորհրդակցական մարմիններ՝

1. Կառավարման խորհուրդ
2. Մանկավարժական խորհուրդ
3. Ծնողական խորհուրդ
4. Աշակերտական խորհուրդ

Մանկավարժական խորհուրդը գործում է ըստ հաստատության կանոնադրության իր լիազորությունների սահմանում:

Ծնողական խորհուրդները, ակտիվ չեն թեդասարանական մակարդակում, թե դպրոցական:

Ըստ դպրոցի կանոնադրության՝դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որի գործունեությունը ակտիվ իրականացվում է:Աշակերտները ակտիվ են,իրենց վերաբերող հարցերի մասին կարծիքի ազատ արտահայտման մեջ : Սակայն միջին դպրոցի աշակերտների քիչ թվաքանակը թույլ չի տալիս,որ հանդես գան բազմաթիվ խմբային նախաձեռնություններով՝ակումբներ,միավորումներ,խմբակներ,որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներն են:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ
Մանկավարժական խորհրդի գործունեությունը	Ծնողական խորհուրդները ակտիվ չեն, թե դասարանական մակարդակում, թե դպրոցական:
Հոսքային՝ բնագիտական , հասարակագիտական, լեզուների միջառարկայական և ներառարկայական դասալսումներ, բաց դասեր՝փորձի փոխանակման , սկսնակ ուսուցիչներին օգնելու՝ նոր չափորոշիչներին համապատասխան դասավանդման մեթոդների , մեթոդական հնարների և ՏՀՏ-ի կիրառման նպատակով	Աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակների բացակայություն Փոքր դպրոց՝ոչ բոլոր առարկաներից ուսուցիչներ չլինելու , կամ մեկ ուսուցիչ լինելու պատճառով չկա մեթոդ միավորումներ

Ուսումնական միջավայրը

Իրավիճակի վերլուծություն

Ուսումնական միջավայրը մանկավարժահոգեբանական իրականությունն է և հատուկ ստեղծված պայմաններիու հանգամանքների համադրությունը, որն ուղղված է սովորողի անհատականության ձևավորմանն ու զարգացմանը:Այլ կերպ ասած.դպրոցում առկա սովորելու և սովորեցնելու մշակույթն է:

Այս առումով կարևոր բաղադրիչ է համարվում նաև ֆիզիկական միջավայրը, ինչը դպրոցում դրական չի կարող գնահատվել նախևառաջ մարզադահլիճ չլինելու պատճառով: Սովորողները դասագրքերով հիմնականում ապահովված են:

Չնայած ֆիզիկական միջավայրի թերություններին, դպրոցում ձևավորված են հասարակական այնպիսի հարաբերություններ,որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին:

ՈՒսումնական միջավայրում ծնողների դերն ու միջամտությունը պասիվ է: Պետք է նշել, որ սովորողները բավարար չափով մոտիվացված չեն,ինչը,թերևս բազում պատճառներ ունեցող խնդիր է:

ՈՒժեղ կողմ	թույլ կողմ
Ժողովրդավարական դպրոցի գաղափարախոսության առկայությունը	1. Հանդիսությունների դահլիճի և մարզադահլիճի բացակայություն 2. Դպրոցում առկա է որոշակի տեսակի ու քանակի ֆիզիկական դաստիարակության համար նախատեսված անհրաժեշտ սպորտային գույք:
	Ներառական կրթության լիարժեք իրականացման համար միջավայրի անհարմարությունը
Պաշտպանված են երեխաների իրավունքները	Համայնքը եզդիաբնակ է այդ պատճառով սովորողները բավականաչափ մոտիվացված չեն , ելնելով իրենց ազգային , կրոնական ավանդույթներից և սովորույթներից:

Տեխնոլոգիաները և նորարարությունները

Իրավիճակի վերլուծություն

Ժամանակակից աշխարհում նորարարական գործունեությունը և տեխնոլոգիաները դարձել են պետության զարգացման խթանիչ ուժ:Ներթափանցել են մարդու գործունեության տարբեր ոլորտներ,օգնում են լուծել տարբեր հիմնախնդիրներ: Բացառություն չէ նաև կրթության ոլորտը:Վերջինս շարունակաբար և հետևողականորեն թվայնացվում է, միտում ունի շարունակականություն ապահովել տեխնոլոգիաների առավել ընդգրկուն ներգրավվածությամբ: Ուստի սովորողներից, դասավանդողներից, կրթության կազմակերպիչներից ու կառավարիչներից պահանջվում է թվային տեխնոլոգիաների դերի գիտակցում, դրանց համապարփակ տիրապետում ու կիրառում: Այս առումով շատ է կարևորվում ինքնակրթության դերը, բաց լինելու տրամադրվածությունը, նորարարություններին պատրաստ լինելը,սովորելու կարողունակությունը,սեփական գիտելիքները, կարողությունները շարունակաբար զարգացնելուն ուղղված ջանքերը: Այլ կերպ ասած՝ դպրոցում թե՛ դասավանդողը, թե՛ սովորողը պետք է ՃԱՆԱՉԻ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՔԱՅԼԻ ՀԱՄԸՆԹԱՑ...

Քանի որ երխանների մեծ մասը տանը ապահովված չեն համակարգչովև ինտերնետ կապով , ՏՀՏ գիտելիքներ ձեռք են բերվում դպրոցում առկա ՏՀՏ գործիքների միջոցով և բավականին ակտիվ է երեխաների մասնակցությունը ուսումնական պրոցեսներին:
Հասատությունն ապահովված է պրոեկտորով, որի միջոցով դասընթացները անցնում են ավելի հագեցած և հետաքրքիր:

ՈՒԺԵՂ կողմ	Թույլ կողմ
Հաստատությունում կա համակարգիչների որոշակի քանակ /5 / և համացանց	Անհատական համակարգիչների ու կապի միջոցների բացակայությունը
Պրոեկտորի մշտական օգտագործումը դասապրոցեսներին	Լիարժեք չի իրականացվում տեխնոլոգիական կրթություն
	Ինտերակտիվ գրատախտակի բացակայություն

5. Հաստատության գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները.

.

ՈԼՈՐՏԸ	ՆՊԱՏԱԿԸ	ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՌԻՍԿԵՐ ԵՎԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան	1.Ունենալ միշտ կապիտալ վերանորոգված դպրոցի շենք, կամ շենքային պայմանների բարելավում՝ առանձնացված գրադարան, լաբորատորիա, տեխնոլոգիա առարկայի դասասենյակ, մարզադահլիճ , հանդիսությունների դահլիճ,սանհանգույց: 2.Ունենալ	Պետական ծրագրով դպրոցի շենքի կապիտալ վերանորոգում: Դպրոցի կողմից շենքային պայմանների բարելավվմանն ուղղված կապիտալ ծախսեր:	Ֆինանսական ոչ բավարար միջոցներ

	հաստատության ազատ և բարեկարգ տարհանման ուղիներ 3.ՈՒնենալ հաստատությունում կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ: 4.Ունենալ հարմարավետ ու ժամանակակից դպրոցական նստարաններ,կահույք 5.Դպրոցի բակի ասֆալտապատում	Համակարգի ձեռքբերում և տեղադրում Նշված կահույքի ձեռքբերում	
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	1.Հնարավոր գրագետ ու սրտացավ կառավարումով ունենալ ֆինանսական միջոցների խնայողություններ:	Ֆինասական մնացորդների ուղղումը առավել նպատակային ծախսերի իրականացմանը:	
Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերը,դրանց վարումը(դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի Իրավական ակտեր, Ներքին իրավական ակտեր)	1. Հաստատությունում ունենալ մատենավարման գերազանց ցուցանիշ,անթերի ու ժամանակին կատարված թե էլեկտրոնային, թե թղթային տարբերակներում:Հնարավոր բոլոր դեպքերում նախապատվությունը տալ էլեկտրոնային եղանակներին: 2. Բաց և թափանցիկ կառավարում, հաշվետվողականություն	Յուրաքանչյուր աշխատակցի ներգրավումը աշխատանքներին՝ հստակ և որոշակի ուղղորդումներով: Դպրոցում գործող խորհրդակցական մարմինների հնարավոր լայն ներգրավումը դպրոցի կառավարմանը	Տարբեր աշխատակիցներիներ գրավման արդյունքում հնարավոր սխալների և բացթողումների հավանականության աճ

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները	1.Կառավարման և խորհրդակցական մարմինների գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացում՝ զերծ ձևական ու ոչ նպատակային գործողություններից: 2.Դպրոցի զարգացմանն ուղղված համագործակցության համար լինել բաց խորհրդակցական մարմինների հետ 3. Աշակերտական խորհուրդը պետք է ունենա իրական ազդեցություն դպրոցի կրթության կազմակերպման քաղաքականության վրա		Խորհրդակցական մարմինների մոտիվացիայի պակաս
Աշակերտական համակազմը	1.ՈՒնենալ էլ ավելի մոտիվացված,երջանիկն դպրոցը սիրող սովորողներ	ՈՒսումնական նմիջավայրի բարելավում	Ֆինանսական միջոցների ներդրում պահանջող ոլորտներում միջոցների սղություն
Մանկավարժական համակազմը	1.ՈՒնենալ ՏՀՏ վերջին գործիքներին տիրապետող ,մոտիվացված,աշխատունակ և իրենց գործի անմնացորդ նվիրյալ ուսուցիչներ	ՈՒսումնական նմիջավայրի բարելավում	Ֆինանսական միջոցների ներդրում պահանջող ոլորտներում միջոցների սղություն
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	1. Համայնքի մյուս կրթական հաստատության հետ ավելի սերտ համագործակցություն	Սպորտային,մշակութային միջոցառումների համատեղ կազմակերպում և անցկացում, որպես ազգային փոքրամասնության համայնքներ համընդհանուր ազգային միջոցառումների իրականացում:	Այլ կազմակերպությունների կողմից համագործակցելու պատրաստակամության բացակայություն

Ուսումնական միջավայրը	1.ՈՒնենալ հստակ դիրքորոշում մարդու իրավունքների պաշտպանության		Հասարակական մտածողության ձևերի հակասում

	հարցում, բացառել խտրականությունը		
	2.ՈՒնենալ գործողությունների պլան կայուն զարգացումը խթանելու թեմաներով:Ստեղծել հնարավորություն հաստատությունում զբաղվելու համար թափոնների վերամշակմամբ:	Կազմակերպել սոցիալական կամ բնապահպանական կրթության օրեր՝ Երկրի օր, Մարդու իրավունքների օր	Աշխատանքի պլանավորման հնարավոր խաթարումներ
	3.Կրթությունը նաև դասասենյակից դուրս ուղենիշի ձևավորում,ուսումնական միջավայրի ընդլայնում	Դպրոցի բյուջեից,հնարավորության դեպքում,հատկացնել միջոցներ կրթական նպատակներով կազմակերպվող էքսկուրսիաներին:	Ֆինանսական միջոցների սղություն
	4.Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողություններին տիրապետում	Հրահանգավորումների,դասընթացների,վարժանքների պարբերաբար անցկացում:	
	5.Համայնքում և դպրոցում կամավորական աշխատանքների կազմակերպում և մասնակցություն		Սովորողների կողմից մոտիվացիայի պակասը
	6.Ազգային ծեսերի ակտիվ ներառում ուսումնական միջավայրում,դասարանական տոները նշելու ավանդույթի ձևավորում	Ծեսի ուսուցում,դասարանում նշել սովորողների ծննդյան տոները,ունենալ դասարանական տոնի օրեր:	Ազգային ծիսակարգերին ոչ լիարժեք ծանոթ լինելը
Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	1.Սովորողների կրթական արդյունքների բարելավում, կյանքի համար անհրաժեշտ կարողությունների	Տեսական գիտելիքների և գործնական կարողությունների	Մեթոդների ոչ ճիշտ ընտրություն և պլանավորումների թերություն

	ձեռքբերում 2.Բարձրացնել օլիմպիադաներին և առարկայական մրցույթներին մասնակցությունը	կապի ամրապնդում:Ներդպրոցական միջոցառումների անցկացում այս նպատակով:	
Տեխնոլոգիաները և նորարարությունները	1.Յուրաքանչյուր սովորողի և ուսուցչի մոտ համակարգչային բավարար գիտելիքների առկայություն: 2.Հիբրիդ ուսուցման ներդրում 3.Դպրոցական կայքի ծավալուն և նպատակային գործարկում	Խորհրդատվությունների և ուսուցողական դասընթացների կազմակերպում ուսուցիչների շրջանում,Ինֆորմատիկա՝առարկայի մոտեցումների վերանայում: Տնային հանձնարարությունների թվայնացում	Դասավանդողների և սովորողների մեծ մասի ապահոված չլինելը անհատական համակարգիչներով ու կապի միջոցներով Դասավանդողների և սովորողների մոտ անհատական համակարգիչների և կապի միջոցների բացակայություն, մոտիվացիայի պակաս

6. Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները,կատարողները,ժամանակացույցը և հնարավոր ֆինասնական ծախսերը.

Գործողություն	**Կատարող**	**Ժամանակացույց**	**Ֆինանսական ծախսեր**
Հաստատության շենքային պայմանների մասնակի վերանորոգում ըստ տարիների առաջացած խնդիրներ	Լիազոր մարմին, գործադիր մարմին	2023-2028թթ	Ըստ կատարված աշխատանքի ծավալի
Հաստատության սանիտարահիգենի կ պայմանների բարելավում	Գործադիր մարմին	2023-2028թթ	Ըստ կատարված աշխատանքի ծավալի
Ուս.հաստատության կանաչ տարածքների բարեկարգում	Տնօրինու թյուն, համայնք	2023-2028թթ	Դպրոցի բյուջե , համայանք, հովանավոր
Որոշ դասարանների համար հարմարավետ ու ժամանակակից դպրոցական աշակերտական սեղան , աթոռների, գրապահարաննե րի, գրատախտակնե րի ,կախիչների ձեռքբերում	Գործադիր մարմին, տնօրինու թյուն	2023-2028թթ	Դպրոցի բյուջե, նվիրատվությու ններ

ՈՒնենալ մատենավարման գերազանց ցուցանիշ, հնարավոր բոլոր տարբերակներում նախապատվությունը տալ էլեկտրոնային եղանակներին՝ սահմանափակելով թղթի օգտագործումը:	Տնօրեն, խորհրդակցական մարմինների բոլոր անդամներ, այլ աշխատակիցներ	2023-2028թթ	Չի պահանջվում
Դպրոցի տարածքի ցանկապատում, դպրոցի շրջակայքի ցեմենտ բետոնյա ամրացման , մուտքի և ելքի թեքահարթակների կառուցման , դպրոց տանող ճանապարհի քարե սալապատման աշխատանքներ	Գործադիր մարմին, տնօրինություն, բարերարներ	2023-2028թթ.	Ըստ կատարված աշխատանքի ծավալի, մարզպետարան, դպրոցի բյուջե, նվիրատվություն
Դպրոցի խմելու ջրագծի և ջրահեռացման ցանցի անցկացում մինչև դպրոցի բակ	Գործադիր մարմին, տնօրինություն, բարերարներ	2023-2028թթ.	Ըստ կատարված աշխատանքի ծավալի, մարզպետարան, դպրոցի բյուջե, նվիրատվություն
Շարժական վագոն տնակի նորոգում, որպես պահեստային մաս, երկրորդ մասը խոհանոցով դարձնել դպրոցական ճաշարան՝ խոհանոցը ապահովելով խմելու ջրի և ջրահեռացման համակարգով	Գործադիր մարմին, տնօրինություն, բարերարներ	2023-2028թթ.	Ըստ կատարված աշխատանքի ծավալի, մարզպետարան, դպրոցի բյուջե, նվիրատվություն

Դպրոցի մարզահրապարակի վերանորոգում և կահավորում	Գործադիր մարմին, տնօրինություն, բարերարներ	2023-2028թթ.	Ըստ կատարված աշխատանքի ծավալի, մարզպետարան, դպրոցի բյուջե, նվիրատվություն

Դպրոցի շենքը հնարավորինս համաատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետության ը	Տնօրենություն	2023-2028թթ	Դպրոցի բյուջե, բարերարներ
Գրադարանային ոնդի համալրում՝մանկական , գիտահանրամատՃելի , գեղարվեստական և ուսումնամեթոդական գրականությամբ	Տնօրինություն , բարերարարներ, համայնքապետարան, ուսուցիչներ, աշակերտներ, գրադարանավար	2023-2028թթ	Ըստ կատարված աշխատանքի ծավալի
Յուրաքանչյուր դասարանների համար մեկ նոթբուքի ձեռքբերում	Տնօրենություն , բարերար	2023-2028թթ	Ըստ կատարված աշխատանքի ծավալի
Դպրոցի տարածքի և հարակից լանջերի ծառապատում՝ պտղատու և դեկորատիվ ծառերով,հատապտուղների թփերով	Տնօրենություն , բարերար, տնտեսվար համակարգող	2023-2028թթ	Ըստ կատարված աշխատանքի ծավալի
Սոց.հարցումների իրականացում ուսուցիչների, սովորողների, ծնողների շրջանում՝ կառավարման, ուսումնադաստիարակչական ոլորտի խնդիրներն ու բացթողումները վերհանելու, շտկելու նպատակով:	Խորհրդակցական մարմիններ, աշակերտական խորհուրդ	Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ	Չի պահանջվում

Կազմակերպել սոցիալական կրթությանն ուղղված միջոցառումներ՝ «Մարդու իրավունքների օր»Մարդու իրավունքների պաշտպանության օր Հաշվի առնելով ազգային որոշ / Եզդի / առանձնահատկություններ	Տնօրեն, գրադարանավար,դասղեկներ,աշակերտական խորհուրդ,ծնողական խորհուրդ	Յուրաքանչյուր ուս տարվա ընթացքում մեկ անգամ	Չի պահանջվում

Բնապահպանական կրթության օրեր՝ բնագիտական և հասարակագիտական առարկաներից նախագծային գործնական աշխատանքների անցկացում դպրոցի հարևանությամբ գտնվող Միրաքի ձորի տարածքով հոսող Քասաղի վտակի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությամբ: Երկրի օրեր. 1. Նպատակային էքսկուրսիաններ դեպի Միրաքի բարձունքում գտնվող հնավայրերի՝ <<Կիկլոպյան >> ամրոցների, բերդերի , գետնուղիների , դամբարանադաշտի հնագիտական պեղումներ հետքերով: 2. Վերականգնվող վաղ միջնադարյան եկեղեցու / 5-րդ դ. Ս. Աստվածածին /, միջնադարյան խաչքարերի ուսումնասիրման, տարածքի	Տնօրեն, ուսուցիչներ, գրադարանավար,դասղեկներ,աշակերտական խորհուրդ,ծնողական խորհուրդ , համայնքապետարանի աշխատակիցներ	Յուրաքանչյուր ուս տարվա ընթացքում մի քանի անգամ	Չի պահանջվում

բարեկարգման, շինարարական աշխատանքների մասնակցության կազմակերպում 3. Համայնքի և դպրոցի տարածքում շաբաթօրյակների պարբերական անցկացում			

Ծրագրի կատարման չափանիշները,վերահսկողություն.

Ծրագրի կատարման վերահսկողության նպատակով նախատեսվում է տարեկան երկու անգամ կատարողականի հաշվետվության ներկայացում խորհրդին:

Այդ հաշվետվությունները պետք է հասանելի լինեն հաստատության շահառուներին՝պետական լիազորված մարմիններ, ծնողներ, համայնք,հաստատության անձնակազմ,սովորողներ:Վերոնշյալ նպատակով հաշվետվությունները հրապարակվելու են դպրոցի պաշտոնական կայքում:Հնարավորէ իրազեկումը իրականացնել նաև տարբեր միջոցառումների ու ժողովների ժամանակ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Ծրագրի կատարողականի ներկայացում ուսումնական հաստատության խորհրդին	Տարեկան առնվազն երկու անգամ
Հաշվետվության ներկայացում մանկավարժական խորհրդին	Յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ անգամ
Հաշվետվության ներկայացում ծնողական ընդհանուր ժողովում	Յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ անգամ

1. ԴՊՐՈՑՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐ

Դպրոցը չունի մարզադահլիճ: Անհրաժեշտ է ձեռք բերել մարզական գույք: Համալրել գրադարանը նոր գրականությամբ: Անհրաժեշտ է ստեղծել վերջին համակարգչային տեխնիկայով զարգացած համակարգչային դասարան:

Ուսումնական հաստատությունում առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի ընթացքում մատչելի դարձնելու համար համակարգչային գրագիտությունը չափազանց կարևոր է և՛ ուսուցիչների և՛սովորողների համար:

Այսօր հիմնական դպրոցը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից:

Պետական բյուջեից ստացված գումարը բավարար չէ դպրոցում առկա խնդիրները լուծելու համար: Անհրաժեշտ է հայթաթել լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Այդ առումով պետք է ակտիվացնել հոգաբարձուների խորհրդի՝ որպես հանրակրթական դպրոցի խորհրդակցական մարմնի գործունեությունը՝ դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթման և արտաբյուջետային ֆոնդի ձևավորման գործընթացում:

Դպրոցի կարիքները հոգալու համար անհրաժեշտ ենք համարում ծավալել ձեռնարկատիրական գործունեություն՝ որպես ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր: Այդպիսի աղբյուրներ կարող են լինել.

- Հիմնադրի սահմանած կարգով վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կանոնադրությանը չհակասող գործունեությունից ստացված միջոցները,
- Դպրոցի շրջանավարտների խորհուրդը, որը կնպաստի շրջանավարտների արդյունավետ և նպատակային մասնակցությունը դպրոցի խնդիրների լուծմանը.
- Ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում.
- Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում:

Դպրոցի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար կարևորում ենք դպրոցի ներքին և արտաքին գնահատումը, որի մեխանիզմը նախատեսված է «Հանրակրթության մասին» օրենքով: Ներքին և արտաքին գնահատումն անհրաժեշտ է ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Որպես դպրոցի տնօրեն՝ կարող ենք իրականացնել սույն ծրագիրը դպրոցի խորհրդի՝ կոլեգիալ կառավարման մարմնի հետ լիարժեք համագործակցությամբ: Կարևորում ենք նաև համագործակցությունը տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, ուսուցիչների, զինղեկի, դպրոցի ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի հետ:

հինգ տարում ձեռնարկում եմ միջոցառումներ առկա խնդիրները որոշ չափով լուծելու ուղղությամբ: Հանձն եմ առնում բարեխղճորենկատարել տնօրենի պարտականություններիը: